ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Hib պատվաստանյութ (*Haemophilus Influenzae* Type b)

Ինչ է անհրաժեշտ Ձեզ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են իսպաներենով և այլ լեզուներով: Տե՛ս՝ www.immunize.org/vis

1 Ինչու՞ պատվաստվել:

Haemophilus influenzae b տիպը (Hib) բակտերիաներից առաջացած լուրջ հիվանդություն է: Այն սովորաբար առաջանում է 5 տարեկանից ցածր երեխաների մոտ:

Ձեր երեխան կարող է վարակվել Hib հիվանդությամբ՝ լինելով երեխաների կամ մեծահասակների շրջապատում, ովքեր հնարավոր է լինեն բակտերիակիր և չիմանան այդ մասին: Մանրէներն անցնում են մեկ անձից մյուսին: Եթե մանրէները մնում են երեխայի քթում և կոկորդում, հավանական է, որ երեխան չի հիվանդանա: Սակայն երբեմն մանրէները տարածվում են թոքերի և արյան մեջ, և այդ դեպքում Hib-ը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել:

Մինչև Hib պատվաստանյութը՝ Hib հիվանդությունը Միացյալ Նահանգներում 5 տարեկանից ցածր երեխաների շրջանում բակտերիալ մենինգիտի գլխավոր պատճառն էր: Մենինգիտը գլխուղեղի և ողնաշարի թաղանթի վարակ է: Այն կարող է հանգեցնել ուղեղի փասվածքի և խլության: Hib հիվանդությունը կարող է նաև պատճառ հանդիսանալ՝

- թոքաբորբի
- կոկորդի խիստ այտուցի՝ խանգարելով շնչառությանը
- արյան, հոդերի, ոսկորների, վերասրտենու վարակի
- մահվան

Մինչև Hib պատվաստանյութը, ամեն տարի Միացյալ Նահանգներում 5 տարեկանից ցածր շուրջ 20.000 երեխա գտնվում էր Hib հիվանդության մահացու վտանգի տակ, իսկ նրանց մոտ 3–ից 6 տոկոսը մահանում էր:

Hib պատվաստանյութը կարող է կանխել Hib հիվանդությունը: Hib պատվաստանյութի կիրառումից ի վեր վարակիչ Hib հիվանդության դեպքերը 99%-ով նվազել են: Շատ և շատ երեխաներ դեռ կվարակվեին Hib հիվանդությամբ, եթե դադարեցնեինք պատվաստումը:

2 Hib պատվաստանյութ

Առկա են Hib պատվաստանյութի մի քանի տարբեր ապրանքանիշեր: Ձեր երեխան կստանա կամ 3 կամ 4 դեղաչափեր՝ կախված այն բանից, թե որ պատվաստանյութն է օգտագործվում:

Hib պատվաստանյութի դեղաչափերը սովորաբար խորհուրդ են տրվում հետևյալ տարիքներում.

- Առաջին Դեղաչափը՝ 2 ամսական հասակում
- Երկրորդ Դեղաչափը՝ 4 ամսական հասակում
- Երրորդ Դեղաչափը՝ 6 ամսական հասակում (եթե անհրաժեշտ է՝ կախված տվյալ պատվաստանյութի ապրանքանիշից)
- Վերջին Դեղաչափը՝ 12–15 ամսական հասակում

Hib պատվաստանյութը կարող է ապահով տրվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

Hib պատվաստանյութը կարող է տրվել որպես համակցված պատվաստանյութի մաս: Պատվաստանյութերի համակցումը կատարվում է՝ այն դեպքում, երբ երկու և ավելի տեսակի պատվաստանյութեր համակցվում են մեկ ներարկման մեջ, որպեսզի մեկ ներարկումն ի վիճակի լինի պաշտպանելու մեկից ավելի հիվանդություններից: Ձեր բժշկից խնդրեք լրացուցիչ տեղեկատվություն:

5 տարեկանից բարձր անձիք սովորաբար Hib պատվաստանյութի կարիք չունեն: Սակայն կարող է տրվել ավելի մեծ տարիքի երեխաներին կամ մեծահասակներին նախքան փայծաղի հեռացումը կամ ոսկրածուծի փոխպատվաստումից հետո: Այն կարող է նաև տրվել որոշակի առողջական խնդիրներ, ինչպես, օրինակ՝ մանգաղաձև բջջային հիվանդություն կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող ցանկացած անձի: Ձեր բժշկից խնդրեք լրացուցիչ տեղեկատվություն:

3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

Hib պատվաստանյութը չպետք է տրվի 6 շաբաթականից փոքր նորածիններին:

Հայտնեք ձեր բժշկին՝

- **Եթե հիվանդն ուն որևէ սուր (կյանքին սպառնացող) ալերգիաներ:** Եթե հիվանդը երբևէ ունեցել է կյանքին սպառնացող որևէ ալերգիկ ռեակցիա Hib պատվաստանյութի դեղաչափ ընդունելուց հետո կամ այս պատվաստանյութի որևէ մասի նկատմամբ ունի սուր ալերգիա, նա չպետք է ստանա դեղաչափ:
- **Եթե հիվանդը լավ չի զգում:** Ձեր բժիշկը կարող է առաջարկել սպասել մինչև հիվանդն ավելի լավ կզգա: Բայց դուք պետք է վերադառնաք:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

4 Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

Պատվաստանյութից, ինչպես և այլ ցանկացած դեղորայքից, հնարավոր են կողմակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են և ինքնուրույն վերանում են:

Հնարավոր են նաև լուրջ կողմակի ազդեցություններ, բայց դրանք շատ հազվադեպ են:

Hib պատվաստում ստացող մարդկանց մեծ մասը դրա հետ կապված խնդիրներ չի ունենում:

Hib **պատվաստմանը հաջորդող մեղմ խնդիրներ՝**

- կարմրածություն, տաքություն կամ այտուցվածություն՝ ներարկման հատվածում:
- տենդ

Այս խնդիրները հաճախակի չեն: Եթե դրանք ի հայտ են գալիս, ապա դա սովորաբար լինում է անմիջապես ներարկումից հետո և վերջին 2 կամ 3 օրերին:

Խնդիրները, որ կարող էին առաջանալ ցանկացած պատվաստումից հետո.

- Ուշաթափության կարճատև նոպաներ կարող են առաջանալ բուժօգնությունից հետո՝ ներառյալ պատվաստումը: 15 րոպե նստած կամ պառկած մնալը կօգնի կանխել ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե հիվանդը գլխապտույտ ունի կամ տեսողության փոփոխություն կամ զնգոց ականջներում:
- Ուսի սուր ցավ և ձեռքի շարժման սահմանափակում՝ ներարկման հատվածում, շատ հազվադեպ՝ պատվաստումից հետո:
- Պատվաստումից առաջացած սուր ալերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են՝ միլիոն դեղաչափից մեկը հաշվարկով: Նույնիսկ եթե նման դեպք էլ առկա է լինում, դա սովորաբար պատվաստումից մի քանի ժամ անց է լինում:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք **www.cdc.gov/vaccinesafety/**

5 Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

- Փնտրեք ցանկացած բան, որը վերաբերում է ձեզ, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ վարքագծային փոփոխություններ:

  Սուր ալերգիկ ռեակցիայի նշաններ են ցանը, դեմքի և կոկորդի այտուցվածությունը, ծանր շնչառությունը և թուլությունը: Սրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

Ի՞նչ պետք է ես անեմ:

- Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, զանգահարեք 9-1-1 կամ տեղափոխեք տվյալ անձին մոտակա հիվանդանոց: Այլապես բժիշկ կանչեք:
- Այնուհետև ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System (VAERS): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկույցը, կամ դուք կարող եք դա ինքներդ էլ անել VAERS վեբ կայքի միջոցով՝ **www.vaers.hhs.gov**, կամ զանգահարելով՝ **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը նախատեսված է միայն ռեակցիաների մասին զեկուցելու համար: Նրանք բժշկական խորհրդատվություն չեն տրամադրում:

6 The National Vaccine Injury Compensation ծրագիր

National Vaccine Injury Compensation ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից տուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP **www.hrsa.gov/vaccinecompensation** կայք:

7 Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր բժիշկին: 1-888-767-4687
- Զանգահարեք ձեր տեղական կան նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների հետ (CDC):
  - Զանգահարեք**1-800-232-4636 (1-800-CDC-INFO)**
  - Այցելեք CDC կայք հետևյալ հասցեով՝ **www.cdc.gov/vaccines**

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

Vaccine Information Statement (Interim)
Hib Vaccine

2/04/2014 Armenian

42 U.S.C. § 300aa-26

Office Use Only

DCH-0449A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

Translation provided by the Immunization Action Coalition